Շաբաթ օրս (10 Յունուար) ել դեսպանն Պարսից և անց յՈւսկիւտարն։

Կիրակի (11 Յունուար). Նարինենցն գնացին աւրհնել։

Բշի (12 Յունուար). ընդ Մարտիրոս վարդապետն ի մեր փուռն գնացաք աւրհնել։

Գշի (13 Յունուար). Տնօրէն։

Ուրբաթի (16 Յունուար) գիշերս վէզիրն ի զօլ ելեալ և թէ որչափ գողք որ կային ի ձեռս իւրեանց յառաջմէ ըմբռնեալք՝ ի գիշերիս զամենեսեան ի վերայ ճանապարհին յանուանի տեղիսն Բ Բ և մի մի մինչև ծե արանց սպանեալ խայտառակօրէն ի տեսիլ ռամկաց ամենայն քաղաքիս։

Եւ յառաւօտիս Շաբաթ (17 Յունուար) ըմբռնեալ զոմն կախարդ յոյժ հմուտ արհեստին, որոյ անուն ասի Շեխ Սալիմ, զսա ևս սպանեալ։

Կիրակի (18 Յունուար). առաւօտուս գնացինք ի կնքատուք Մաչուկենցն, և է բարեկենդան Առաջաւորաց։ Երեկոյս ի Մզտեսի Տիլէկենցն էի։

Գշի (20 Յունուար). լու եղև ի քաղաքս՝ թէ մեռաւ Զուռնաղանն ի յԷրզրում։ Եւ օրս ըմբռնեալ տէֆտէրտարին զԳաբրիէլ վարդապետն եւ եդ ի բանտի, զի սա ի յԷրզրում բանադրանաց թուղթ բերեալ առ Սարգիս վարդապետն և ոչ տվեալ ի նա, այլ յետ գալոյ սորա աստ՝ տան ի նա, և նա զայն ասէ Էրզրումայ փաշային, և փաշան ուղարկեալ թուղթ առ տէֆտէրտարն թէ Այս ինչ մարդ է ի Պարսից եկեալ՝ և ոչ կարացի հաւանել դմա, զի ևս թուղթ ունի ընդ իւր, զդա այդր ըմբռնեալ քննեսցես զբանն։

Եւ օրս քշեցին զնաղարազան Մուստաֆա փաշան և զայլ փաշայս, զէմիր փաշան՝ զհին տէֆթէրտարն։

Եւ օրս եկն պատրիգն Հոռոմոց Երուսաղէմի հրամանաւ վէզիրին։ Եւ օրս զեկեղեցոյն մեր զսեղանա-